

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

## ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2022 թվականի սեպտեմբերի 19-ին կայացած Գիտական Խորհրդի N1 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 26-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և  
քվեարկության դրեց նիստի օրակարգը:

### Օրակարգ

1. 2022-2023 ուստարվա ֆակուլտետի Գիտական Խորհրդի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում /զեկ.գիտքարտուղար Ե.Մանուկյան/
2. 2022/2023 ուստարվա ընդունելության արդյունքները և խնդիրները /զեկ.դեկան Մ.Գրիգորյան/
3. Անվանական կրթաթոշակ ստանալու թեկնածուների առաջադրում /զեկ.փոխդեկան Վ.Վարդանյան/
4. 2021/2022 ուստարվա ուսումնական և մասնագիտական պրակտիկաների արդյունքների քննարկում /զեկ.փոխդեկան Ս.Քելյան/
5. ՈւԳԸ գիտական խորհրդի հաշվետվություն 2021/2022 ուստարում կատարած աշխատանքների վերաբերյալ /զեկ.գիտ.խորհրդատու Վ.Մանուկյան/
6. Ընթացիկ հարցեր

Օրակարգը հաստատելուց հետո

1. **ԼՄԵՅԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտքարտուղար դոց. Ե.Ս.Մանուկյանի հաղորդումը 2022/2023 ուստարվա աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ: Նա նշեց, որ ներկայացված 2022/2023 ուստարվա աշխատանքային պլանի նախագիծը նախապես ուղարկվել էր Խորհրդի անդամներին՝

անհրաժեշտության դեպքում առաջարկություններ և փոփոխություններ կատարելու նպատակով: Որևէ փոփոխության առաջարկություն չի արվել և հետևաբար հաստատման դրվեց ներկայացված՝ 2022/2023 ուս.տարվա աշխատանքային պլանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել 2022/2023 ուս.տարվա աշխատանքային պլանը:

**2. ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան դոց.Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը 2022/2023 ուստարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց ուսանողների թվերն ըստ մասնագիտությունների: Դեկան Մ.Գրիգորյանն իր մտահոգությունը հայտնեց մասնագիտությունների համար նախատեսված տեղերի քանակը չհամալրվելու վերաբերյալ: Առաջարկեց ամբիոններում քննարկել հարցը, առաջարկություններ ներկայացնել ԵՊՀ-ի գիտական խորհրդում այն քննարկելու: Նա նշեց, որ դիմորդների թվի նվազումը բնագիտական մասնագիտությունների ուղղությամբ խիստ մտահոգիչ է՝ պատճառները բազմաթիվ են:

- Ծագած խնդիրները լուծելու համար մեր կողմից իրականացվող աշխատանքները բավարար չեն: Պետք է համապետական մոտեցում: Կրթական համակարգը գտնվում է ամենացածր մակարդակի վրա, դպրոցի շրջանավարտների ճնշող մասը էլեմենտար գիտելիքներ չունեն: Ընդունելության քննությունների գործող կարգը արդյունավետ չէ: Պետք է հարց բարձրացնել Կառավարության առջև՝ հանրապետությանը պե՞տք են քիմիկ, ֆիզիկ, մաթեմատիկ, երկրաբան, աշխարհագետ, կենսաբան մասնագետներ թե՞ ոչ և ելնելով դրանից որոշումներ կայացնել:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ.**

Ուսանող Ս.Սահակյանը, Ֆ.Ախոյանը, դոց.դոց.Վ.Գրիգորյանը, Ս.Սուվարյանը, Ա.Առաքելյանը, Շ.Խաչատրյանը, Ա.Պոտոսյանը, Ս.Ներսեսյանը, պրոֆ.պրոֆ.Ա.Ավագյանը, Պ.Էֆենդյանը, իրենց մտահոգությունը հայտնեցին բնագիտական թևի մասնագետների սղության վերաբերյալ: Առաջարկեցին Կառավարության մակարդակով օրենքի ուժով հնարավորություն ստեղծել բնագիտական մասնագիտությունների ուղղությամբ դիմորդների թիվը մեծացնելու:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն

**3.**

**3.1** *ԼՄԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ պրոֆ.

Վ.Պ.Վարդայանի հաղորդումը <Ղևոնդ Ալիշան>-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց անվանական կրթաթոշակի հավակնելու կանոնակարգը, ինչպես նաև առաջադրված թեկնածու՝ Աշխարհագրության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Մարիամ Վարդանի Թովմասյանի ներկայացրած փաստաթղթերը:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 26, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0 Աշխարհագրության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Մարիամ Վարդանի Թովմասյանին երաշխավորել <Ղևոնդ Ալիշան>-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

**3.2** *ԼՄԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը <Տիգրան Ջրբաշյան>-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց անվանական կրթաթոշակի հավակնելու կանոնակարգը, ինչպես նաև առաջադրված թեկնածու՝ Երկրաբանության բաժնի 4-րդ կուրսի ուսանող Անժելա Սարգսի Թովմասյանի ներկայացրած փաստաթղթերը:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Բաց քվեարկության արդյունքներով՝ ԿՈՂՄ՝ 26, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0, Երկրաբանության բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Անժելա Սարգսի Թովմասյանին երաշխավորել <Տիգրան Ջրբաշյան>-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

**4.** *ԼՄԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց.Ս.Քելյանի հաղորդումը **2021/2022 ուստարվա ուսումնական և մասնագիտական պրակտիկաների արդյունքների վերաբերյալ:** Նա ներկայացրեց պրակտիկաներին չմասնակցած ուսանողների թիվը: Հաղորդման ընթացքում մասնավորապես նշվեց, որ պրակտիկաների ընթացքում խնդիրներ չեն առաջացել, ռեկտորատի կողմից լուծվել է Ծաղկաձոր-Հանքավան երթուղու կայացման հարցը: Զեկուցողը նշեց նաև,

որ ուսանողներն իրենց դրական կարծիքն են հայտնել թե սննդի և թե կացության ընդհանուր պայմանների վերաբերյալ:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ.** դոց.Սուրեն Ներսեայանը՝ հրամանագրված լինելով 2021-2022 ուստարվա պրակտիկայի ղեկավար, նշեց, որ անհրաժեշտ է պրակտիկայի կազմակերպումն անցկացնել “Մարմարիկ” հանգրվանի տարածքում ինչը պրակտիկայի կազմակերպման տեսակետից թե մասնագիտական և թե անցկացման առումով մեծ առավելություններ ունի:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն

**5. ԼՄԵՑԻՆ.** ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության գիտական խորհրդատու դոց.Վ.Մանուկյանի հաշվետվությունը 2021/2022 ուստարում կատարած աշխատանքների վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության գիտական խորհրդատու դոց.Վ.Մանուկյանի ներկայացրած հաշվետվությունը՝ 2021/2022 ուստարում կատարած աշխատանքների վերաբերյալ գնահատել բավարար:

## **6. Ընթացիկ հարցեր**

**6.1 ԼՄԵՑԻՆ.** Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի վարիչ դոց.Մ.Ս.Մկրտչյանի հաղորդումը ամբիոնի ասպիրանտ **Հարություն Երեմյանի** ատենախոսության թեմայի վերնագրի փոփոխման վերաբերյալ: Նախկին “Ախուրյան գետի վերին հոսանքի ավազանի ստորերկրյա ջրային ռեսուրսների հնարավոր փոփոխությունների գնահատումը պայմանավորված տեխնածին գործոններով” թեմայի փոխարեն հաստատման ներկայացվեց “Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրային ռեսուրսների վիճակի փոփոխությունների գնահատումը պայմանավորված տեխնածին գործոններով” թեման:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի ասպիրանտ Հարություն Երեմյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրային

ռեսուրսների վիճակի փոփոխությունների գնահատումը պայմանավորված տեխնաձին գործոններով» վերնագրով:

**6.2 ԼՄԵՑԻՆ.** Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի հաղորդումը Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի, աշխարհագրության ֆակուլտետի Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ **Մարինե Մաթոսյանի** “Աշխարհագրություն” դասիչ ԻԴ.03.01 մասնագիտությամբ դոկտորական ատենախոսության թեման **“ՀՀ տարածքային համաչափ զարգացման աշխարհագրական ցուցիչների ռեգիոնալ քաղաքականության իրականացման գործընթացում”** վերնագրով հաստատելու վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի, աշխարհագրության ֆակուլտետի Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ **Մարինե Մաթոսյանի** “Աշխարհագրություն” դասիչ ԻԴ.03.01 մասնագիտությամբ դոկտորական ատենախոսության թեման հաստատել **“ՀՀ տարածքային համաչափ զարգացման աշխարհագրական ցուցիչների ռեգիոնալ քաղաքականության իրականացման գործընթացում”** վերնագրով:

**6.3 ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Սուվարյանի հաղորդումը «Սերվիս» մասնագիտության բակալավրի 4-րդ կուրսի ուսանող Մարիամ Սարգսի Տաշյանի թեկնածությունը «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին առաջադրելու վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով «Սերվիս» մասնագիտության բակալավրի 4-րդ կուրսի ուսանող Մարիամ Սարգսի Տաշյանի թեկնածությունը ուսման գերազանց առաջադիմությունը, ինչպես նաև մասնակցության համար անհրաժեշտ բոլոր չափորոշիչները՝

երաշխավորել «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին մասնակցելու:

**6.4. ԼՄԵՅԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոց.Արսեն Գրիգորյանի հաղորդումը «Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Գոռ Արմենի Խաչատրյանի թեկնածությունը «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին առաջադրելու վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով «Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Գոռ Արմենի Խաչատրյանի ուսման գերազանց առաջադիմությունը, ինչպես նաև մասնակցության համար անհրաժեշտ բոլոր չափորոշիչները՝ երաշխավորել «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին մասնակցելու:

**Խորհրդի նախագահ՝**

**Մ.Ա.Գրիգորյան**

**Խորհրդի քարտուղար՝**

**Ե.Ս.Մանուկյան**